



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

20 հունվարի 2011թ. թիվ 7

**ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՈՐՈՇ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2011թ. պետական բյուջեի մասին» ՀՕ-176-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի, ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հաշվի առնելով մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի 19.01.2011թ. զեկուցագիրը՝

Կ ա Ր Գ ա Դ Ր ՈՒ մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների բարձրագույն խմբի և գլխավոր խմբի 1-ին ենթախմբի պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին 2010թ. տարվա արդյունքների հիման վրա պարգևատրել տարեկան հիմնական աշխատավարձի 12.736%-ի չափով՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

2011թ. հունվարի 20
ք.Վանաձոր

Ա.ՔՈՉԱՐՅԱՆ